ՎԱՆՔԵՐԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԴԵՊՔԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XIII ԴԱՐՈՒՄ

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Ըստ Ս. Ներսես Շնորհալու՝ Կ. Կոստանյանցի հղմամբ վանքերը հայոց բարոյական պաշտպանության համար եղան «…սիւնք աշխարհի, պարիսպք ընդդէմ թշնամւոյն և աստեղք լուսատուք յերկրի»[1]:

Հայոց աշխարհում հնուց ի վեր հիմնարկվել են բազմաթիվ վանքեր, որտեղ հաստատված սուրբ ուխտերի միաբանները ճգնակյաց վարքով ու երկնաբարձ անդադար աղոթքներով Աստուծո հետ միավորվելու ճանապարհին կրոնական ինքնանվիրումից զատ, ժամանակի ընթացքում իրենց եղբայրություններն առաջնորդեցին բազմաբնույթ գործառույթների շավիղներով: Վանքերը ոչ միայն դարձան կրոնական խոշոր կառույցներ, բարեգործական հաստատություններ, այլև մեծ դեր կատարեցին հայ ժողովրդի հոգևոր, համամարդկային վեհ ու առաջադեմ գաղափարներով սնուցված ազգային-քրիստոնեական դաստիարկության, գիտական մտքի ձևավորման ու խորացման, կրթական գործի կազմակերպման ու տարածման մեջ: Ամենակալ Աստծուն ջերմեռանդ ծառայությամբ, Նրա երկնային օրհնությամբ ու հովանավորությամբ գիտակրթական հզոր կենտրոնների ու գրչության բեղուն օջախների վերածված վանքերը մարդկանց համար ակնածանքի կաճառներ ու սրբության վայրեր էին. դրանցից մշտապես սիրո, հույսի, հավատի, բարու, կարեկցանքի, քաջալերանքի, գթության, արդարության, ազնիվ մտքի շողեր էին ճառագվում: Հավատավոր ժողովուրդը սիրում էր իր վանքերը, սրբացնում դրանք: Իսկ սրբությունները վաճառքի չեն հանվում: Բայց ահա, XIII դարում մի շարք վիմագրերում տեսնում ենք, որ հիշյալ ժամանակաշրջանում, որքան էլ տարօրինակ է, վաճառվել և գնվել են վանքեր: Բարեբախտաբար, այդպիսի գործարքների դեպքերը շատ չեն, և այդ երևույթը համատարած բնույթ չի կրել, չի խորացել ու չի տարածվել:

Վանքի առք ու վաճառքի առաջին դեպքը հայրենակիցների միջև նկատում ենք Հառիճավանքում, որտեղ հայոց և վրաց ամիրսպասալար Զաքարե Զաքարյանը «գանձագին» է անում «զհռչակաւոր սուրբ ուխտս Հառիճայ…»՝ իր ողջ բնական, սեփական կալվածներով, ինչը Հ. Եղիազարյանին ենթադրել է տվել,

---

[1] *Կ. Կոստանեանց. Հայոց վանքերը, Մոսկվա, 1886, էջ 34:*

որ մեծ զորապետն այդ մենաստանը «գնել է հավանաբար Պահլավունիներից, որովհետև այդ ժամանակ Շիրակը կազմում էր Պահլավունյաց իշխանների սեփականությունը»[2]: Կ. Կոստանյանցի դիտարկմամբ, «ԺԲ դարի վերջերում արևելյան Հայաստանի վանքերը Զաքարէ սպասալարի հովանաւորութեան տակ էին. նա իւր զէնքի զօրութեամբ շատ գաւառներ մահմէտականների ձեռքից գրաւեց իւր իշխանութեան ներքոյ. պատմիչների ասելով, նորա ժամանակ շատ աւերեալ վանքեր և եկեղեցիներ նորոգուեցան և կրօնաւորական կեանքը զարգացաւ. արձանագրութիւններն ևս պատմում են քաջ և բարեպաշտ սպասալարի առատաձեռնութեան և աշխարհաշինութեան մասին. նորա յիշատակներեն են Հառիճայ, Հաղարծին, Սանահին, Հաղբատ և այլ վանքերի մի քանի շէնքերը…»[3]:

Եթե Հառիճավանքում Զաքարյանները հանդես են գալիս գնորդի դերում, ապա հաջորդ երկու դեպքերում նրանք ներկայանում են որպես վանքավաճառներ: Այդ մասին նախ ազդարարում է Գոշավանքի Ս. Աստվածածին եկեղեցու խորանի կիսակլոր պատին 1283 թ. կարմիր գույնի ներկով գրված ընդարձակ բնագրի սկզբնամասը.

«… Ես՝ Ճարս, որդի պատրոն Ումեկին, թոռն Ճարին աշխարհաւ մանծկերտեցի, յաշխարհակալութեան Արղունին և թագաւորութեան վրաց Դեմետրի Բագրատունւոյ, իմ հայրն Ումեկն գնել էր զԳետիկ ի :ԽՌ: (40.000) կարմիր դուկատի: Ես՝ Ճարս գնեցի զՅովս իւր ամեն սահմանաւքն, ի դառն ժամանակի, որ հայրենիքն արժան էր, և ոսկին թանգ ի :ԴՌ: (4.000) կարմիր դաւկատ, ու տվի Գետկա Աստածնիս…»[4]:

Մոնղոլ աշխարհակալ Արղուն իլխանի (1283/4–1291) և վրաց Դեմետրե Բ Անձնազոհ թագավորի (1275–1289/91) օրոք գրված այս հիշատակությունը հանգամանալից վերլուծել են «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի VI պրակի կազմողները: Ըստ նրանց, «Նշանավոր մեծահարուստ պարոն Ումեկի որդի Ճարի այս արձանագրությունը միակ աղբյուրն է, որ հաղորդում է Ն. Գետիկի վանքը, վանքապատկան գյուղերն ու մյուս կալվածքները Զաքարյան իշխանների կողմից Կարինից գաղթաց Ումեկին վաճառելու մասին: Իմ հայրն Ումեկն գնել էր զԳետիկ ի ԽՌ կարմիր դուկատի, *գրում է Ճարը: Նկատի ունենալով այս գումարի վիթխարի արժեգինը վկայված ժամանակաշրջանում, պետք է կարծել, որ Ումեկը ձեռք է բերել վանքն այն սահմաններով, որոնք հաստատվել էին Զա-*

---

[2] *Հ. Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. Հառիճա վանքը և նրա վիմագրությունը.– «Էջմիածին», 1956, VIII – IX, էջ 81:*

[3] *Կ. Կ ո ս տ ա ն ե ա ն ց. նշվ. աշխ., էջ 57–58:*

[4] *«Դիվան հայ վիմագրության», պր. VI, Իջևանի շրջան, կազմեցին Ս. Ավագյան, Հ. Զանփոլադյան, Երևան, 1977, էջ 71:*

քարյանների կողմից՝ եւ ընծայեցին եկեղեցւոյն սահման ջրադարձիւք լեռնէ ի լեառն, *ինչպես նաև հետագայում վանքի սեփականությունը դարձած մյուս գյուղերն ու կալվածքները… Ն. Գետիկի վանքի սույն առուծախը կատարվել է 1242–1250 թթ. միջոցին, Զաքարյան Ավագի և Ումեկի միջև»*[5]*:*

Այդ արձանագրության կապակցությամբ Ա. Հովհաննիսյանը գրում է. «Հողի էժանացման և ոսկու թանկացման գաղտնիքը բացելու համար նշենք, որ այս մի ժամանակ էր, երբ հարկահանների և պարտատերերի երեսից գյուղերը մարդաթափ էին լինում և տեղական ֆեոդալները շահագրգռվում էին զիջել իրենց կալվածքները խոշոր փողատերերին»[6]*:*

Համեմատության կարգով նշենք, որ Նոր Գետիկի գործարքից 25–35 տարի հետո մեկ ուրիշ մեծահարուստ, դիվանագետ, Երևանի, Մրենի, Օշականի տեր և Անիի համասեփականատեր Սենոպ Սահմադինը «զթագաւորանիստ» Մրենում իր իսկ նախագծով («յիմ մտաց դուս առանց վարդպետի ձեւեցի») կառուցված պալատի, այգու, Արքայություն կոչվող պարտեզի միայն դարպասների վրա ծախսել է («ու խարճ») նույնքան գումար՝ «ԽՌ (40.000) դուկատ դահեկան»[7]*:*

Պետք է խոստովանել. որ Գոշավանքի 1283 թ. արձանագրությունից անորոշ է՝ Ումեկը գնել է Գետիկ գյու՞ղը, թե՞ վանքը: Բայց նույն վայրի 1301 թ. նվիրագրով հաստատվում է, որ վաճառվել է վանքը. «…ես՝ Թաղարտէրս, որդի Ճարին, թոռն պարոն Ումեկին միաբանեցայ ՍԲ *ուխտիս Գետկա՝ մեր գանձագին հայրենի եկեղեցոյս…»*[8]*:*

Հայտնի է, որ Նոր Գետիկ վանքային համալիրն ըստ նույն տեղի Ս. Աստվածածին եկեղեցու ՈԽ թվի շինարարական վկայագրի՝ հիմնադրել է միջնադարի նշանավոր գործիչ, օրենսգիր ու առակագիր Մխիթար վարդապետ Գոշը 1191–1196 թթ.[9]*, օժանդակությամբ Արցախի կողմնապետ Վախտանգ Խաչենեցի Հաթերքեցու, նրա կնոջ Արզու խաթունի և նրանց եղբայրների: Ուստի, հարց է ծագում՝ ի՞նչ իրավունքներ ուներ ամիրսպասալար, աթաբեկ Ավագ Զաքարյանը (1213–1250) Նոր Գետիկ վանքի նկատմամբ, որ վաճառքի հանեց կրոնական այդ հաստատությունը: Պատասխանը գտնում ենք Կիրակոս Գանձակեցու մոտ: Պատմիչի հաղորդմամբ վանքի կառուցման համար տարածքը Տանձուտի կոչվող ձորում հատկացրել է մեծ իշխան Իվանե Զաքարյանը՝ խնդրանքով իր*

---

[5] *Նույն տեղում, էջ 71–72:*

[6] *Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, Երևան, 1957, էջ 207:*

[7] И. О р б е л и. Надписи Мрена.– *«Հայագիտական հետազոտություններ», պր. Ա, Երևան, 1974, էջ 41–42:*

[8] *Դիվան, պր. VI, էջ 78:*

[9] *Տե՛ս նույն տեղում, էջ 65:*

մորեղբայր, Կայենի բերդատեր ու գավառի իշխան Քուրդ Արծրունու, ով հայրն է վերոհիշյալ Արզու խաթունի և բարեկամը Մխիթար Գոշի[10]: Ի դեպ, այն հանգամանքը, որ պատմագիրը, նկարագրելով Նոր Գետիկ վանքի կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցին որպես «գեղեցկաշէն արուեստիւ զմբեթարդ երկնանման, սիրալի տեսողաց», և կառույցը թվագրելով ըստ շինարարական վկայագրի հիշատակության՝ «սկսեալ ի ՈՒԽ թուականին հայոց, զկնի չորս ամայ առնլոյ զԵրուսաղէմ Սալահդնին, և կատարի յամս հինգ ի խանգար զատկին հունաց»[11], հիմք է տալիս եզրակացնելու (անշուշտ, նաև այլ տեղեկությունների հետ համադրությամբ, ինչպես նկատել են մի շարք ուսումնասիրողներ՝ Ս. Ավագյան, Հ. Ջանփոլադյան, Բ. Ուլուբաբյան), որ Կիրակոս Գանձակեցին նույնպես օգտագործել է վիմագրերը որպես պատմական հավաստի սկզբնաղբյուրներ[12], ճիշտ է ոչ հանգամանալից, ինչպես Ստեփանոս Օրբելյանը:

Մահից առաջ Մխիթար Գոշը «գրեաց կտակ առ մեծ հազարապետն Իւանէ, եղբայրն Զաքարէի, և յանձնեաց ի նա զվանսն և զառաջնորդն, և ինքն փոխեցաւ յաստեացս առ Քրիստոս՝ ալևորեալ և լի աւուրքք»[13]:

Տարօրինակ է, որ հայոց եկեղեցու ավանդին անմնացորդ հավատարմությամբ հայտնի Մխիթար Գոշը սեփական անդուլ ջանքերով հիմնարկված և իր անվամբ հռչակ ձեռք բերած վանքը կտակում է երկաբնակ Իվանե Զաքարյան աթաբեկին՝ չմտահոգվելով այն հավանական քաղկեդոնականացման վտանգի տակ դնելու պարագայով, ինչպես Պղնձահանքի, Քոբայրի և հայադավան նախկին այլ մենաստանները:

Սակայն այն հանգամանքը, որ Գոշը, Նոր Գետիկի վանքը տարածքի սեփականատեր Իվանեին կտակելով և միաժամանակ նրան հանձնելով նաև «զառաջնորդն» ի դեմս իր աշակերտ Մարտիրոսի՝ «մանուկ տիօք, բայց կատարեալ իմաստութեամբ, այր քաղցրաձայն յերգս պաշտամանն, և առատամիտ ընթերցող, և երագ ի գրչութիւն»[14], կարծես ապահովագրում էր մենաստանը հավանական քաղկեդոնական ոտնձգություններից: Քաղկեդոնականության վտանգը միաժամանակ վերանում է, երբ Ավագը Գոշավանքը շնորհում է իրենց՝ Զաքարյանների Իվանեի ճյուղի տիրույթների կառավարիչ, իր գործակալ, թիկնա-

---

[10] *Տե՛ս* Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. *Պատմություն հայոց (այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի), աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 210–211:*

[11] *Նույն տեղում, էջ 212: Իրոք, Եգիպտոսի սուլթան, ծագումով դվինեցի քուրդ Սալահ ադ-Դին ալ-Այուբին խաչակիրներից երեք կրոնների սրբավայր Երուսաղեմը ետ է գրավել 1187 թվականին:*

[12] *Տե՛ս Դիվան, պր. VI, էջ 70,* Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. *Գանձասար, Երևան, 1981, էջ 77:*

[13] Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, *էջ 219–220:*

[14] *Նույն տեղում, էջ 219:*

պահ Գրիգոր Տղա հեջուբին (արաբ. حاجب - «թիկնապահ», «գործավոր») որպես «տեղի գերեզմանի»[15]: Իսկ Գրիգորը Արցախի գլխավոր, կողմնապետությունը վարող իշխանական տան ներկայացուցիչ էր, որի տոհմակիցները հայ առաքելական եկեղեցու նվիրյալ զավակներ էին: Գրիգոր Տղան Նոր Գետիկի Ս. Աստվածածին եկեղեցու խորանին թողել է արձանագրություն, որով հայտնում է. «… Ես՝ Գրիգոր, հեջուբ ամիր սպասալար Աւագին, որդի Սմբատա, որդոյ մեծին Վախտանգա՝ կողմնապետաց աշխարհին Արցախա, առեալ աթաբակի Իւանէի, սնոյց զիս և իւր տանն և Աւագին առաջնորդ կացոյց: Զի ոչ ունեի զաւակ, յուսով խնդրեցի զայս եկեղեցի՝ ինձ շիրիմ հանգստեան: Աւագն ինձ երետ…»[16]: Գրիգոր հեջուբ Խաչենեցին, ինչպես հաղորդում է Կիրակոս Գանձակեցին, «Գնեաց զիւղ մի ի նմանէ, Վաշիէ անուն, մերձ յԱղստև, ետ զայն ի վանքն, և այլ բազում արդիւնս… Շինեաց և հրաշազան եկեղեցի մի՝ երեքխորանի, մերձ ի գաւիթս եկեղեցւոյն, շինուած զարմանակերտ, և անուանեցաւ եկեղեցին յանուն սրբոյն Գրիգորի…»[17]:

Բայց տարածքի, որի վրա վեր էր խոյանում Գոշավանքի համալիրը, սեփականատիրության իրավունքը շարունակում էր պատկանել Ավագ Զաքարյանին, ով էլ, ի վերջո, ինչպես վերն ասել ենք, վաճառեց վանքը մանազկերտցի մեծահարուստ Ումեկին, և նրա հետագա սերունդները, վիմագիր տեղեկությունների համաձայն, ըստ ամենայնի, հոգ տարան այդ հոգևոր հզոր կենտրոնի համար մինչև XIV դ. կեսերը:

Վանքերի առք ու վաճառքի հաջորդ դեպքը նույնպես կապված է Ավագ Զաքարյանի հետ: Այս անգամ գործարքը կատարվում է Այրիվանքի շուրջ: Այդ փառահեղ մենաստանում հայոց սպարապետ Պռոշ Խաղբակյանը (1223–1284) երկու արձանագրությամբ (առաջինը՝ անթվակիր, երկրորդը՝ 1283 թ.) հայտնում է. «Ի տերութեն բարէպաշտ աւծ ասէր թագադրին վրաց Աւագին եւ Շահնշահի եւ որդո նորա Զաքարէի ես Պռոշ Վասակա յազգէն Խաղբակա գանձագին արարի ի տերանց աշխարհիս զմեծահռչակն Այրիվանս լերամբ եւ դաշտաւ եւ ամենայն կազմութբ, որ կայր ի սմա, փորեցի ի վիմէ տուն Ա.յ…»[18], ապա ավելացնում, որ «զիմ ոսկով գնած հայրէնիքս» իրենից ստացել է նվիրատվություններ՝ Ավետարան, արծաթի և ոսկի խաչ, պահարաններ, սկիհներ, բուրվառներ, քշոց, այնտեղ շինել է եկեղեցիներ, կանգնեցրել խաչքարեր, պատրաստել հանգստարան իր և Պռոշյան ազգի համար, սուրբ ուխտի սպասավո-

---

[15] *Նույն տեղում, էջ 223:*

[16] *Դիվան, պր. VI, էջ 70:*

[17] *Կիրակոս Գանձակեցի, էջ 223:*

[18] *Գարեգին կաթողիկոս Յովսէփեան. Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 305:*

ության համար ընծայել է Ողջաբերդ, Բերդաղ գյուղերը և 10.000 սպիտակ՝ արծաթե դրամ[19]:

Ըստ Գ. Հովսեփյանի՝ «ԺԳ. դարի քառասնական թուականներին Պռոշ մեծ իշխանը գնել է այդ վանքը Իւանե աթաբեկի որդի Աւագից իւր տոհմի համար գերեզմանատուն դարձնելու նպատակով»[20]:

Հանուն ճշմարտության պետք է խոստովանել, որ առք ու վաճառքի երկու դեպքում էլ, թե՛ Նոր Գետիկի, թե՛ Այրիվանքի, հայոց եկեղեցին շահել է, քանի որ վերացել է այդ փառավոր կրոնական կենտրոնները քաղկեդոնականացնելու հավանականությունը:

Իսկ մյուս դեպքերում էլ վանքերը ծաղկել են նոր տերերի հովանու ներքո: Այսպես, վերոհիշյալ մեծահարուստ Ումեկ Մանզակերտցու ազգական Ստեփանոսը՝ «որդի Յոհանա», հայտնում է, որ 1252 թ., «Ի հայրապետութեան Տն Կոստանդեայ, արհիէպիսկոպոս սութեն ան Համազասպա, եւ յաշխարհակալութեան եւ ի զաւրապետութեան Սաթունին … գնեցի զԽոռակերտ և զիր գեղն, և զայգին, որ ի Շուեր վանիցս, յաւիտեան ի ԿՌ (60000) սպիտակ սուլտանի և շինեցի զսա ի հիմանէ՝ սկսեալ յուսով անմահին Ա՛յ: Լինել ինձ և եղբարց իմոց և որդոց արձան կենդանի և տեղի գերեզմանի մինչև գայ Քն…»[21]: Վաթսուն հազար սպիտակը հավասար է 6000 ոսկե դրամի[22]: Եթե վճարված գինը համեմատենք Նոր Գետիկի գնման հետ (40.000 ոսկի), ապա ավելի քան վեց ու կես անգամ ցածր արժեքը պետք է բացատրվի Խորակերտի վանքի ոչ բարվոք վիճակով ու սակավ ունեցվածքով (մեկ գյուղ ու այգի): Դատելով արձանագրության սկզբնամասում Հաղբատավանքի առաջնորդ Համազասպ արքեպիսկոպոսի ու երկրամասի իշխան Սադուն Արծրունու անունների հիշատակությունից՝ պետք է փաստել, որ Խորակերտի վանքն ի հոգևորս ենթարկվել է Հաղբատի եպիսկոպոսական աթոռին, իսկ տարածքը պատկանել է Զաքարյաններին ազգակից Կայենի ու Մահկանաբերդի տիրակալներին:

XIII դ. առք ու վաճառքի գործարք է կատարվել Բագրատունյաց թագավորության փառքի տաճարներից մեկի՝ Հոռոմոսի վանքի շուրջ, սկզբում մասնակի, ապա ամբողջական: Հայտնի է, որ այդ մենաստանը հիմնարկվել էր Անանիա Ա Մոկացի կաթողիկոսի (946–968) օրոք. «Ի զաւառին Շիրակայ Հոռոմոսին

---

[19] Տե՛ս նույն տեղում:

[20] Նույն տեղում, էջ 199:

[21] «Դիվան հայ վիմագրության», պր. IX, Լոռու մարզ, կազմեցին Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սադումյան, Երևան, 2012, էջ 264:

[22] Տե՛ս նույն տեղում, էջ 265:

կոչեցեալ վանք շինեցաւ ի ձեռն Յովհաննիսի»[23]: Վերջինս մեկն էր բյուզանդական կայսրությունում դավանական հողի վրա հալածված ու Բագրատունյաց Հայաստան տեղափոխված կրոնավորներից, որոնց մի մասի՝ նոր հաստատված սուրբ ուխտում միաբանվելու պատճառով էլ վանքը, ինչպես հայտնի է, կոչվեց Հոռոմոս (հոռոմց), այսինքն՝ բյուզանդացիների (բյուզանդացւոց):

Բագրատունյաց շրջանում «տիեզերահռչակ վանս Հոռոմոսի» եղավ «հանգստարան թագաւորաց»[24], որտեղ էլ հավիտենական հանգիստ գտավ նաև Սարգիս Ա Սևանցի (990–1019) կաթողիկոսը: Սելջուկյան տիրապետության ժամանակ այն մտնում էր Անիի արքեպիսկոպոսական թեմի մեջ, ինչպես հուշում է Հոռոմոսի 1174 թ. արձանագրությունը[25]:

Հայաստանը թուրք-սելջուկներից ազատագրելուց հետո Հոռոմոսը մյուս վանքերի նման անցնում է Զաքարյան իշխանապետների հովանու ներքո: XIII դ. սկզբին Հոռոմոսը տնօրինում էր Զաքարե ամիրսպասալարը: Այդ մասին ակնարկում է հետևյալ վիմագիրը. «Ի ոծէ. (1206) թիւս ես Զաքարիայ Շահանշահ, որդի Սարգսի, զաւրապետ հայոց եւ վրաց, քակեցի զջաղացն, որ յԱկանս հակառակ ջրիս շինած էր, եւ վերստին հաստատեցի զջուրս ի վանքս Հոռոմոսի վասն արեւշատութեան ինձ եւ եղբաւր իմոյ Իւանէի…»[26]:

Սակայն մի շարք վիմագրերից ակնբախ է, որ Զաքարյաններն այնուհետև «տէրութիւն վանացս» սեփականության իրավունքով շնորհել են իրենց գործակալներ Գրիգոր, Վահրամ հեջուբներին, Սմբատին, Իշխանին:

Ժամանակներ անց որպես գլխավոր համասեփականատեր, ինչպես նկատելի է ստորև հղվող արձանագրությունից, մնում է այլ աղբյուրներից մեզ հայտնի Նոր Բերդի տիրուհի, իշխանաց իշխան Վասակ Կյուրիկյանի կինը՝ Խաթուն Անեցին, քանի որ վանքային համալիրի հուշարձանները միայնակ է նորոգել. «Քրիստոս աստուած ի քո մեծի ծագման լուսո նորոգեա զհոգի Խաթունին, դստեր Հեճուպ Վարհամա, որ մեծ յուսով եւ բազում արդեամբք վերստին նորոգեաց զեկեղեցիքս. եւ զի ոչ ունելով մարմնաւոր զաւակ ստացաւ իւր ժառանգ և յիշատակ զսուրբ Յովհաննէսի…»[27]:

Արձանագրությունից նաև իրազեկվում ենք, որ Խաթունը երեխաներ չի ունեցել, եղել է անժառանգ: Հնարավոր է՝ հենց նրանից էլ 1271 թ. Հոռոմոսը գնել են

---

[23] *«Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 174:*

[24] *«Վիմական տարեգիր, ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց», կազմեաց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 20–21:*

[25] *Տե՛ս նույն տեղում, էջ 32:*

[26] *Նույն տեղում, էջ 47:*

[27] *Նույն տեղում, էջ 147:*

վաճառական եղբայրները, Անիի հարկահանները. «… Ուքան Քարիմադինս եւ եղբայր իմ Պապքան Վախրադինս որդիք Սարգսի թոռն Հոգոյն (եւ) հարսն իմ Դապտայ Խաթունս գնեցաք զվանքս իւր ամենայն սահմանաւք հողով եւ ջրով…»[28]:

Հոռոմոսի ՉԻԳ (1274) թ. վիմագրից իմանում ենք, որ Ուքան Քարիմադինը, նրա կին Դապտախաթունը և եղբայրը՝ Վախրադինը, «գնեցաք Հոռոմի վանացս կէսն…»[29], ինչը ներդաշնակ է այդ մենաստանի մի քանի սեփականատերերի գոյությանը: Անշուշտ, այս արձանագրությունն ավելի ուշ է փորագրվել, նախքան 1271 թվականը, երբ Սարգսի վաճառական որդիներն ամբողջությամբ գնել էին Հոռոմոսի վանքը: Նրանց երրորդ եղբայրը՝ Առյուծը, իր տիկին Սեղայի հետ 1277 թ. Հոռոմոսում կառուցել է նշխարատուն[30]:

Ավելի ուշ՝ 1336 թ., Հոռոմոսի վանքը տեսնում ենք կրկին Զաքարյանների հովանու ներքո, ի դեմս Վահրամ աթաբեկի[31]:

Վանքերի արտառոց վաճառքի ու առքի երևույթին անդրադառնալով՝ Գ. Գրիգորյանը պարզաբանել է, որ «Պարտավի 768 թ. ժողովի 14-րդ հոդ. նշվում է, թե ոմանք «ի նեղութենէ հարկաց անձինքն հանեն ի վաճառ և սակաւ ինչ գոյութեան լինի և վաճառեսցէ զեկեղեցի կամ զսպասս սրբութեան, կամ ի կարասեաց կամ յանդաստանաց եկեղեցւոյ»… Այսպիսի մարդիկ խիստ նզովվում են: Ինչպես տեսնում ենք, եկեղեցին վաճառվել է «ի նեղութենէ հարկաց»: Արաբները, ըստ երևույթին, ստիպել են հոգևորականներին՝ չնչին գնով վաճառել եկեղեցին, այլ վիճակներին թանկ գնով վերավաճառելու համար: Մխիթար Այրիվանեցին նշում է, որ Աբուսահլի արշավանքի ժամանակ Ամոտիսը ուներ 1000 վանք: Գրաված քաղաքի բոլոր վանքերը նա «ետ զօրաց իւրոց» (Մխիթար Այրիվանեցի, *էջ 54): Հասկանալի է, որ զորականները պետք է այն վանքերը վերավաճառեին ավելի թանկ գնով»[32]: Փաստորեն, հայոց մեջ արաբական տիրապետության շրջանում եղել են եկեղեցիների հարկադրական առք ու վաճառքի դեպքեր, որոնք ստիպողաբար կատարվել են ոչ թե հայ աշխարհիկ տերերի, այլ հոգևոր այրերի կողմից: Այդ դեպքերը եղել են ի վնաս հայոց եկեղեցու: Ընդհակառակը, ի նպաստ հայոց եկեղեցու վանքերի առքի երևույթի ականատեսն ենք լինում Հայաստանում սելջուկյան տիրապետության վախճանին. Լմբատավանքում ՈԽ՝ 1191 թ. Տեր Բարսեղ Պահլավունի-Ապիրատյանը գնում է «զվանքս»*

---

[28] И. О р б е л и. Избранные труды. Ереван, 1963, с. 474.

[29] *Վիմական տարեգիր…, էջ 117:*

[30] *Տե՛ս նույն տեղում, էջ 119:*

[31] *Տե՛ս նույն տեղում, էջ 165–166:*

[32] *Գ. Գ ր ի գ ո ր յ ա ն. Սյունիքի վանական կալվածատիրությունը IX–XIII դարերում, Երևան, 1973, էջ 68, տողատակ:*

«յանաւրինաց», որ Բագրատունյաց թագավորության ժամանակ գտնվում էր մայրական կողմով իրենց ազգակից ու տոհմակից Պահլավունիների տիրույթներում և նվիրաբերում Ցիցք գյուղը «և ջուրն որ իւրն էր ի հնոց լեալ...»[33]:

Վերը բերված վկայություններից նկատելի է, որ եթե արաբական տիրապետության օրոք հոգևորականները ճարահատյալ վաճառում էին եկեղեցիները մուսուլման տիրակալներին, ապա սելջուկյան բռնակալության պարտված մայրամուտին որպես գնորդներ հանդես են գալիս հայ բարձրաստիճան հոգևոր ու աշխարհիկ իշխանավորներ, որոնք վանքերը գնում են մահմեդականներից: Իսկ ահա, մոնղոլական տիրապետության ժամանակ հայերը վանքերը գնում են հայրենակիցներից, ընդ որում գործարք կատարողները ոչ թե եկեղեցականներ են, այլ՝ աշխարականներ:

Միանգամից հարկ է նշել, որ Բագրատունյաց հզոր թագավորության շրջանում, երբ երկրի ողջ տարածքը ծածկվեց բազմաթիվ նորանոր վանքերով, կրոնական հաստատությունների առք ու վաճառքի դեպքեր մեզ հայտնի չեն:

Կ. Կոստանյանցը հայոց վանքերի կառուցումներն իշխանական կալվածներում համարում է թագավորների օրինակին հետևող մեծամեծների ոգու դրսևորման գեղեցիկ պտուղներ՝ ստեղծված փոխադարձ մրցության արդյունքում, բայց «դարերի ընթացքում Հայոց վանքերի մէջ մտան նոր կարգեր և փոփոխություններ, որոնք ծնունդ էին իրենց ժամանակի, թէև երբէք չփոխեցաւ Ս. Լուսաւորչի կազմակերպութեան հիմքը...»[34]:

Որպեսզի հասկանանք, թե ինչու՞ հոգևոր կառույցի ճակատագիրը պետք է որոշի աշխարհականը, այլ ոչ հոգևորականը, հարկ է մի փոքր խորանալ վանքաշինության ակունքների մեջ: Քրիստոնեության պետական կրոնի հռչակումից ի վեր Հայաստանում կառուցվեցին մեծ թվով վանքեր: Դրանք հիմնականում առաջացան երկու ճանապարհով՝ եկեղեցու միջոցով և առանձին իշխանների ջանքերով: Գ. Գրիգորյանի դիտարկմամբ, «Անհատ մարդկանց կողմից վանքեր կառուցելը բացատրվում է ոչ միայն կրոնական գործոնի ուժեղ ազդեցությամբ, այլև տոհմիկ իշխանների փառասիրության ձգտումներով, քանի որ միջնադարում բարեգործ էր համարվում հատկապես այն ֆեոդալը, որն իր հոգու փրկության համար կառուցել էր տալիս վանք: Նման դեպքերում վանքը բարոյատնտեսական հենարան էր դառնում ֆեոդալին»[35]: Ա. Հովհաննիսյանի իրազեկմամբ, «Ֆեոդալ կալվածատիրության դիրք ուներ հայ եկեղեցական հիերարխիան տակավին հայ թագավորների ժամանակ: Վանքերն ու եկեղեցիներն

---

[33] *Նույն տեղում, նաև՝ Հ. Եղիազարյան. Էմբատավանքը և նրա վիմագրությունները.– «Էջմիածին», 1960, Բ, էջ 55–56:*

[34] *Կ. Կոստանեանց. նշվ. աշխ., էջ 46:*

[35] *Գ. Գրիգորյան. նշվ. աշխ., էջ 69:*

ունեին հողային ընդարձակ ֆոնդեր՝ մեծ մասամբ խլված հեթանոս տաճարներից և քուրմերից, կամ հետագայում ֆեոդալական հատկացումներով ստացված: Աշխարհիկ ֆեոդալները եկեղեցուն նվիրում էին գյուղեր, վարելահողեր, այգիներ, ջրաղացներ, շենքեր, ինվենտար, աշխատող ձեռներ կամ իրենց հոգու փրկության համար «միաբան» դառնում եկեղեցուն ու «պատարագ» ստանում նրանից: Եկեղեցու աշխարհիկ «պատրոնները» կամ «վանաց տերերը» իրենց հովանու կամ ազդեցության տակ էին առնում եկեղեցին կամ վանքը, դիտում այն որպես «սեփական ուխտ», «հայրենիք», ֆեոդալական «ժառանգություն»: Հաճախ պատրոնների քանակով ու դիրքով իսկ չափվում էր այս կամ այն վանքի, կամ եկեղեցու ազդեցությունն ու կշիռը:

Հոգևոր իշխանության այդ ստորադրումը աշխարհիկ իշխանության ֆեոդալական մի սիստեմ էր, որ իշխում էր ոչ միայն Հայաստանում, այլև հարևան երկրներում: Այդ մի սիստեմ էր, որ թագավորում էր և՛ քրիստոնյա Բյուզանդիայում, և՛ մուսուլման Իրանում…

Եկեղեցու՝ աշխարհիկ ֆեոդալներից ունեցած կախումը և երկրի ֆեոդալ իշխողների եկեղեցու վրա տարածած հովանավորությունն ու նրանց հատկացված կալվածքները, հարկային իմունիտետը («մուաֆությունը») և այլ իրավունքները անխախտ էին մնում նաև օտար տիրապետությունների օրոք…»[36]:

Այդպիսով, ավատատերերը, միջնադարում հիմնադրելով վանքեր և դրանց կատարելով խոշոր նվիրատվություններ, որոնց իր գրքում ամենայն մանրամասնությամբ, ժամանակի առկա մատենագրական ու վիմագրական տվյալներով անդրադարձել է Ս. Հակոբյանը[37], բացի հոգևոր-կրոնական պահանջմունքների բավարարումից, լուծում էին երկու կարևորագույն խնդիր, որ հրատապ էին հատկապես օտար տիրապետողների օրոք. առաջին՝ օժտում էին սեփական ավատական տիրույթներն անձեռնմխելության իմունիտետով, այսինքն՝ ապահովագրում էին դրանք օտար ոտնձգություններից, բռնազավթումներից և երկրորդ՝ դարձնում ապահարկ, տեղերում առաջնորդ ու վանահայր էին կարգում իրենց հոգևորական տոհմակիցներին, հաճախ էլ չբավարարվելով դրանով՝ իրենք, հագնելով կրոնավորի սքեմ և «միաբանվելով» սուրբ ուխտի եղբայրությանը ի մոտո հսկում էին իրենց «վանքապատկան» կալվածները:

Այն, որ միջնադարում վանքերը հանդիսանում էին դրանք կառուցողների կամ գնորդների ժառանգական սեփականությունը, ինչպես կարծում է Ա. Հովհաննիսյանը[38], իհարկե ոչ բոլորը, կարծես փաստվում է վերը հղված օրինակ-

---

[36] Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 305–306:

[37] Տե՛ս Ս. Հ ա կ ո բ յ ա ն. Հայ գյուղացիության պատմություն (զարգացած ֆեոդալիզմի դարաշրջան), հ. 2, Երևան, 1964, էջ 175–176:

[38] Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 315:

ներով: 1010 թ. Սմբատ Մագիստրոսի կառուցած Բագնայրի վանքում արդեն 1266 թ. Խորաս Արծրունին արձանագրում է, որ «ետու ի մեր սեփական սուրբ ուխտն Բգների՝ Սուրբ Աստուածածին զմեր զանձագին զՋրձորիկ վանքն իւր սահմանաւք ջաղացով» և այլ նվիրատվություններ[39]:

Բայց վանական հաստատությունները, բացի XIII դ. մի քանի դեպքերից, ողջ քրիստոնյա Հայաստանի պատմության մեջ առք ու վաճառքի թիրախներ չեն հանդիսացել, քանի որ Հայաստանյայց առաքելական եկեղեցին դրանք համարել է իր սեփականությունը, իսկ ավատատերն «իր կառուցած վանքերն հսկել և հովանավորել է լոկ տիրության իրավունքով»[40]:

Եկեղեցին, ի սկզբանե խրախուսելով աշխարհականների կողմից վանքերի հիմնադրումը, ընդունելով դրանք և կանոնադրելով դրանց գործունեությունը, «շարունակում էր անկախ մնալ կրոնական խնդիրներում, նախանձախնդրաբար պաշտպանելով իր իրավունքները աշխարհիկ տերերի կողմից եղող ոտնձգությունների դեմ»[41]: Ա. Հովհաննիսյանը հղում է կատարում «Յամի չորրորդի Կոստանդիանոսի կայսեր բարեպաշտ թագաւորի Հռոմոց», այսինքն՝ 645 թ. Դվինում գումարված Դ եկեղեցական ժողովի Ժ (10-րդ) կանոնին, որում ասվում էր. «Ոմանք յազատաց ի վերայ վանաց իշխանութիւն առնեն, եւ վանական զոր կամին հանեն եւ արկանեն, զոր չէ արժան եւ աւրէն. եւ ոմանք ընտանեաւք ի վանքն նստին, արհամարհեալ զեկեղեցաւն Աստուծոյ՝ անպատկառելի անամաւթութեամբ: Արդ՝ եթէ լուեալ մերոյ հրամանիս դարձին եւ թողցեն յառաջնորդս զտեսչութիւն եկեղեցւոյն կարգել եւ յաւրինել ըստ հաճոյիցն Աստուծոյ, այնպիսեացն յառաջագոյն գործելեաց յանցանացն թողութիւն լիցի եւ ի մեր միաբան ժողովոյս աւրինեալ եղիցի»[42]:

Ա. Հովհաննիսյանը նաև մեջբերում է Խորով Գանձակեցու վկայաբանությունը, որտեղ Գոշը գանգատվում էր, թե «մարդիկ աշխարհական՝ որ ոչ ունէին զօծումն քահանայութեան, այլև կանայք նոցա վերատեսուչք լինէին եկեղեցեաց, և ամենայն ոք համարձակ գործէր զչարիս և ոչ ուստեք երկիւղ և ոչ յանդիմանութիւն»[43]:

Արդեն «Դատաստանագրքում» Գոշը փորձում է սահմանափակել աշխարհականների միջամտությունը վանական գործերին: «Դատաստանագրքի» Գ գլ-

---

[39] Կ. Բասմաջեան. Հայերէն արձանագրութիւնք Անւոյ, Բագնայրի եւ Մարմաշինու, Պարիս, 1931, էջ 177–178:

[40] Գ. Գրիգորյան. նշվ. աշխ., էջ 69:

[41] Ա. Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 315:

[42] «Կանոնագիրք Հայոց», Բ, աշխ. Վ. Հակոբյանի, Երևան, 1971, էջ 210–211:

[43] Ա. Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 311, «Հայոց նոր վկաներ», աշխ. Հ. Մանանդյանի և Հ. Ամատունի, Վաղարշապատ, 1903, էջ 24:

խում ասվում է. «… Թագաւորաց եւ իշխանաց, միանգամայն եւ ամենայն հաւատացելոց շինել վանս ոչ յաղագս մարմնաւոր ինչ յուսոյ է, այլ մանաւանդ՝ հոգեւոր, յաղագս այնորիկ ոչ պարտի ժառանգութիւն լինել»[44]: Նույն կանոնով վանահայրերի նշանակումը վերցվում է աշխարհականների իրավասությունից և հանձնվում եպիսկոպոսներին. «Արտաքոյ իրաւանց է իշխանաց կաշառաւք առաջնորդ եղբարցն կացուցանել, զոր նոքա ոչ կամիցին եւ ըստ դատաստանի է ելանել եղբարցն, մինչեւ ըստ կամաց նոցա ընտրիցի լաւն: Բայց հասարակ լիցի կամքն, եւ եպիսկոպոսունք եղիցին այդոցիկ կարգիչք, եւ մի՛ ոք յաշխարհական կարգաց»[45]: Այդ կապակցությամբ «Դատաստանագրքի» Գ խմբագրությունում միևնույն մասով հակիրճ ասվում է. «Իշխանաց ոչ է օրէն կաշառօք հայր դնել վանաց առանց կամաց եղբարցն: Եւ եպիսկոպոսունք եղիցին այդոցիկ կարգիչք և այն իրաւամբք և ոչ կաշառօք»[46]:

Իսկ «Դատաստանագրքի» գլուխ ՃԽԲ (142-րդ) կանոնով, որ վերաբերում է եկեղեցու ունեցվածքին, գույքին, անցանկալի է համարվում եկեղեցական ինչքերի վաճառքը. «իցէ՝ եթէ՛ գեւղ եւ եթէ՛ այլ ինչ», բայց չի արգելում, թողնում է եպիսկոպոսի կամքին. «Կանոնականս հրաման անվաճառելի լինել զեկեղեցւոյսն կամի»[47], և իշխողն այս հարցում թեմակալն է: Նույն կանոնով արգելվում է այլազգիին եկեղեցուց որևէ բան վաճառելը. «Ի դէպ է եւ զայս դիտել, զի այլազգ ոչ վաճառի եկեղեցւոյքն … Եւ այդ ընդունելի դատաստան է յեկեղեցիս»[48]: Այդ օրենքը, ըստ էության, արգելելով եկեղեցու ունեցվածքից այլազգիներին, պետք է հասկանալ նաև ոչ քրիստոնյաներին որևէ բան վաճառելը, կարծես տեղ է թողնում դա կատարելու հայրենակիցների միջև՝ անկախ դավանանքից[49]:

Այստեղից էլ ի հայտ է գալիս վանքերի առք ու վաճառքի երևույթը Հայաստանում XIII դարում:

Միանգամայն այլ էր վիճակը Կիլիկիայի հայկական թագավորությունում, որտեղ կար կուռ պետականություն: Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագրքի» ԽԳ (43-րդ) կանոնը սահմանում էր, որ վանքերին իշխեին եպիսկոպոսները. «Սահման էր՝ որ յառաջ չիշխէր եպիսկոպոսն վանացն. ապա թէմին մէն իշխէր, եւ վաներն աշխարհական պարոնայք հոգային, եւ զով ուզէին՝ թողուին ի վանքն. ու զոր ոչ՝ նա հանէին: Նա գրած է հիմայ՝ որ ով լսաւղ լինի սահմանիս,

---

[44] *Մխիթար Գոշ. Գիրք դատաստանի, աշխ. Խ. Թորոսյանի, Երևան, 1975, էջ 33:*

[45] *Նույն տեղում, էջ 34:*

[46] *Նույն տեղում, էջ 306:*

[47] *Նույն տեղում, էջ 91:*

[48] *Նույն տեղում:*

[49] *Ախթալայի եկեղեցին Իվանե Զաքարյանը գնել էր հայադավաններից և քաղկեդոնական վանք դարձրել (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 222, 238):*

եւ եպիսկոպոսն թողու զվանքն իր ապրանաւքն՝ նա աւրինած է յԱստուծոյ, եւ Աստուած զիր մեղքն թողու ու զիր ծնաւղացն»[50]:

Կիլիկյան «Դատաստանագրքի» ԾԷ (57-րդ) կանոնով, որ կոչվում է «Վասն անձեռնմխելիութեան իրքին եկեղեցւոյ», եկեղեցական գույքի վերահսկողությունը վերապահվում է եպիսկոպոսին[51]: ԿԵ (65-րդ) կանոնը ևս կարծես փորձում է վանքերի տնօրինության կարգավորումը հանձնել եպիսկոպոսին. «Եւ եկեղեցւոյն եպիսկոպոսն պատեհ է, որ սահմանէ եւ ուղղէ զիրենց կարգն, եւ ոչ այլ ոք՝ որ է յաշխարհականաց»[52]:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ XIII դ. Հայաստանում վանքերի՝ կրոնական տեսանկյունով ոչ բարոյական առք ու վաճառքի երևույթը, բացառությամբ մեկ-երկու դեպքի, հիմնականում կապված է հայ առևտրական դրամագլխի ներկայացուցիչների հետ, որոնք, ունենալով հսկայական դրամական միջոցներ ու չբավարարվելով կալվածներ ձեռք բերելուց, գնում էին նաև վանքեր ոչ միայն իրենց հոգիների փրկության ու հոգևոր պահանջմունքների բավարարման համար, այլև դրանց նվիրաբերելով սեփական, զանձագին տիրույթները՝ ապահովագրում էին դրանք անձեռնմխելիության իմունիտետով և օժտում ապահարկության իրավունքով:

Պատմական այդ ժամանակահատվածում վանքերի առք ու վաճառքի «օրինականության» գլխավոր պատճառը հայրապետական աթոռի հեռու գտնվելն էր մայր երկրից՝ Արևելյան Հայաստանից, հետևապես կենտրոնական հսկողության թուլությունը. կաթողիկոսներն իրենց անմիջական մասնակցությունը չէին կարողանում բերել արագ ընթացող իրադարձություններում: Բավական է հիշել այն փաստը, որ 1243 թ. Սսի Բ ժողովի կանոնները Հայաստան հասան միայն երեք տարի անց[53]:

Հավելենք, որ հետագա դարերում վանքերի առք ու վաճառքի երևույթի մարումը կապված էր ոչ միայն հայ իշխանական երբեմնի հզոր տների թուլացման ու ցավալիորեն պատմական ասպարեզից XV դ. կեսին նրանց հեռացման, այլև կաթողիկոսական աթոռի՝ Հայաստան վերադարձի հետ: Իսկ սկսած XVII դ., երբ երկրում նորից բարձրացավ վանաշինության, եկեղեցաշինության ալիքը, որի ետևում կանգնած էր Հայաստանյայց եկեղեցին, հոգևոր հաստատությունների տնօրինությունն ամբողջությամբ գտնվում էր Մայր Աթոռի իրավասության ներքո: XIX դարում էլ եկեղեցիների կառուցման գործում արդեն իր մեծ դե-

---

[50] *Սմբատ Սպարապետ. Դատաստանագիրք, հավաքական տեքստը, ռուս. թարգմ., առաջաբ. և ծանոթ. Ա. Գալստյանի, Երևան, 1958, էջ 50:*

[51] *Տե՛ս նույն տեղում, էջ 60–61:*

[52] *Նույն տեղում, էջ 73:*

[53] *Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 310–311:*

բակատարություն ունեցավ համորեն հայ հավատավոր ժողովուրդը, որի հանգանակած միջոցներով Հայաստանում վերականգնվեցին բազմաթիվ պատմական սրբարաններ, վեր հառան նոր աղոթարաններ՝ օրհնությամբ Ամենայն հայոց կաթողիկոսության:

СЛУЧАИ КУПЛИ И ПРОДАЖИ МОНАСТЫРЕЙ В АРМЕНИИ В XIII ВЕКЕ

АШОТ МАНУЧАРЯН

Резюме

В XIII в. в Армении наблюдаются случаи продажи монастырей, которые находились под владением князей. Покупателями в основном были представители торгового капитала, которые делали монастыри не только фамильными духовными центрами, но и дарили свои владения храмам, наделяли их иммунитетом неприкосновенности и правом не платить налоги, как требовали порядки того времени. Главной причиной аморального явления купли и продажи монастырей являлось далекое от Армении расположение католикосского престола, который находился в Киликии. Вследствие этого церковный контроль над религиозными учреждениями был слабым.

CASES OF SELLING AND BUYING OF MONASTERIES IN ARMENIA IN THE 13TH CENTURY

ASHOT MANUCHARYAN

Summary

There were noticed cases of selling of the monasteries under the princely domain in Armenia in the 18th century. The purchasers were mainly the representatives of the merchandise. They both turned the monasteries into the family spiritual centers and donated vast possessions to them thus making them more powerful. Those monastic principalities were even tax free which was appropriate to the law existing then. The main reason for the selling of the monasteries was due to the fact that the Catholicosate Seat was far away from Armenia. So the control of the Church over its religious institutions was weak.